



ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան փ. 105/1, «Ցիտադել» բիզնես կենտրոն, 204 սենյակ
Հեռ: +374 10 514 315, ֆաքս: +374 10 514 317, էլ. փոստ: aspired@engl.com

**2019թ.-ի փետրվարի 28-ին ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում տեղի է ունեցել նախամրցութային հանդիպում՝
հետաքրքրված հայտատուների հետ**

Պարզաբանումներ

**ՀՆՀ # 210219-01 Ինժեներական նախագծի պատրաստում Վեդի քաղաքի ռոռզման համակարգի բարելավման
ծրագրի շրջանակում**

Ամիս, ամսաթիվ՝ 28 փետրվարի, 2019թ. Վայր՝ ԱՄՆ ՄՁԳ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 105/1, «Ցիտադել»
բիզնես կենտրոն, 204 սենյակ)

N	Հարց	Պատասխան
1.	Ինչպես ձեռք բերել DUNS համար՝ հայտում ներկայացնելու համար:	Հայտատուի կողմից կտրամադրվի որևէ կոնտակտային տվյալ ԳԱՏՕ ծրագրի գրասենյակի կողմից էլեկտրոնային հասցե նուղարկելու համար, որտեղ անհրաժեշտ տվյալների գրանցմամբ հնարավոր կլինի ձեռք բերել DUNS համարը: Բոլոր ԱՄՆ և օտարերկրյա կազմակերպությունները, որոնք ստանում են 25,000 ԱՄՆ դոլար և ավելի բարձր արժողությամբ առաջնային պայմանագիր/զնման պատվեր կնքելու հնարավորություն, պարտավոր են պայմանագիրը կնքելուց առաջ ստանալ DUNS համար: Կազմակերպություններն ազատվում են այս պահանջից, եթե բոլոր աղբյուրներից նրանց ստացած համախառն եկամուտը նախորդ ֆիսկալ տարում ցածր է եղել 300,000 դոլարից: Նման հիմքով ազատվելու համար ME&A-ն յուրաքանչյուր հայտատուից պահանջում է ստորագրել ինքնահավաստագիր:
2.	Կցանկանայինք իմանալ ի՞նչ գումարի սահմաններում է լինելու ծրագիրը:	ՀՆՀ-ում տեղադրված սխեմատիկ գծագրում պատկերված է թե որ տարածքում է նախատեսվում կառուցել ռոռզման համակարգը և ինչ աշխատանքներ պետք է իրականացվեն: Գումարի չափը կախված է

		ձեր առաջարկներից:
3.	Արդյո՞ք ՀՆՀ-ում առկա սխմեն համաձայնեցված է համայնքի հետ:	Այո, ՀՆՀ-ում տեղադրվախ սխեմատիկ գծագիրը մշակվել է համայնքի հետ համագործակցելով: ԳՍՏՕ ծրագիրն ունի համապատասխան գրություն, ըստ որի՝ համայնքը այս մոտեցման հետ համաձայն է:
4.	Հնարավո՞ր է սխեմատիկ գծագրում նշված տարածքը փոփոխության ենթարկվի:	Վեղի քաղաքի ոռոգելի տարածքը ավելի մեծ է քան սխեմատիկ գծագրում նշված տարածքը: Սակայն ինչպես մեր ծրագրի, այնպես էլ համայնքի տվյալ տարվա բյուջեն սահմանափակ է և հնարավոր չէ ավելի մեծ տարածք ներառել ծրագրում:
5.	Արդյո՞ք կա խորքային հորի ջրօգտագործման թույլտվություն:	Այո:
6.	Ինչպե՞ս է կազմակերպվելու բուստերային պոմպի էլեկտրասնուցման հարցը:	Ինչպես ներկայացված է ծրագրի հայեցակարգում, հին համակարգը պետք է փոխարինվի երկաստիճան համակարգով: Նախատեսվում է բաժանել բարձրադիր և ցածրադիր գոտիների: Բուստերային պոմպ կտեղադրվի մայն բարձրադիր գոտու համար, և էլեկտրասնուցումը կմատակարարվի հարևանությամբ գտնվող սպորտդպրոցից:
7.	Ինչպե՞ս է նախատեսվում իրականացնել ոռոգումը:	ԳՍՏՕ ծրագրի և քաղաքապետարանի պատկերացումներով, ոռոգման համակարգը պետք է լինի հնարավորինս պարզ: Դիմող կազմակերպությունները կներկայացնեն իրենց առաջարկները:
8.	Արդյո՞ք ոռոգումը լինելու է սովորական, մակերեսային, թե՞ նախատեսվում է անձրևացման համակարգ տեղադրել:	Ոչ, անձրևացման համակարգը ձեռնտու չէ այս տարածքի համար: Նախատեսվում է տեղադրել պարզ, մատչելի և դիմացկուն համակարգ:
9.	Արդյո՞ք ծավալաթերթը և նախահաշիվը պետք է ներկայացվեն առանձնացված:	Այո:
10.	Արդյո՞ք նախատեսվում է բակերում ջրաչափեր տեղադրել:	Ջրաչափ կտեղադրվի միայն հիմնական ջրագծի վրա: Չի նախատեսվում ջրաչափ տեղադրել բակերում: